



#### 124. ԴԱՏԱՍՍԱՆ

Գիշերով դող կը մտնա ջուլչակի տուն, պատի շերեւանովի բան օր կափլփե, ջուլկի մասրեն օր խրթուկ էր մըջ պատին՝ կը չքվի դողու աչք, աչք կը քոռնա:

Օլոր օր դող կէրթա մրտ դատավորին գանգատ.

— Մտա ջուլկի տուն բան կը դաշենք, մասրեն չքավ աչքսի քոռցուց, խնդիրք կէնիմ ջուլկի մեկ աչք հանիս իմ աչքի տեղ:

Ջուլչակ հախ ունեք, մասրեն զարկեք էր ի սլատ՝ զուր արհեստ կը բանցուցեք:

Ջուլչակ կը տանին դատարան, դատավոր կըսե.

— Ջուլչակ, դու հախ շունեք զմասրեն չքուցեք ի պատ, ըշտե էնի չքվեք է դողու աչք, քոռցուցեք է դգրդ, քու մեկ աչք պտի հանիմ գողու աչքի տեղ:

Ջուլչակ հինգ կարմիր օսկի գիշերով կը սօանե կիտա դատավորին, դատի ժամանակ կըսե.

— Դատավոր աֆանդի՛, ես ջուլչակ իմ, աջ ձեռքով մքուկ թալիմ՝ աջ աչքով պտի իշկիմ, ձախ ձեռքով մքուկ թալիմ՝ ձախ աչքով պտի իշկիմ, էրկու աչք լե ընծի շատ պետք ին: Օր դիմ մեկ աչք հանել տաս՝ ես կէղնիմ շիվար, իմ ճրժկրնեք կը մնան անոթի: Նեճիրվան՝ օր թվանք կըբանցու, մեկ աչք կը խփու, մեկել աչքով նշան կը բոնե, մեր քաղթի մեջ նեճիրվան մե կա, զընդոր մեկ աչք հանե դողու աչքի տեղ: Նեճիրվան էրկու աչք ի՞նչ կէնե:

— Շարիաթն էլ զէդ կը հրամայե, որդի՛, — կըսե դատավոր: Ջնեճիրվանու մեկ աչք կը հանե գողու աչքի տեղ: